

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹԵՄԱ 1. ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՈՒ

ԹԵՄԱ 2. ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ԹԵՄԱ 3. ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ և ԼԵԶՈՒ:

Հարցեր.

1. Տրամաբանություն դասընթացի նպատակն ու խնդիրները.
2. Ի՞նչ է ուսումնասիրում տրամաբանությունը, ո՞րն է դրա առարկան:
3. Տրամաբանության նշանակությունը:
4. Տրամաբանության տիպերը:
5. Լեզվի տրամաբանական վերլուծությունը.
 - լեզուն որպես հաղորդակցման միջոց,
 - լեզուն որպես նշանային համակարգ:
6. Տրամաբանության պատմական արմատները, ներառյալ հայ փիլիսոփայության պատմությունը:
7. Տրամաբանական մտածողության դերը իմացության պրոցեսում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՔ. Տրամաբանություն դասընթացի նպատակն ու խնդիրները.

Տրամաբանական մտածողությունը մարդու կարևորագույն հատկանիշներից է: Ակնհայտ է, որ մարդու ամենօրյա կենսագործունեության ընթացքում կիրառվող, այսպես կոչված, բնական տրամաբանությունը, տարբերվում է տեսական տրամաբանությունից, որի ուսուցմանն էլ հենց ծառայում է ներկա դասընթացը:

«Տրամաբանություն» տերմինը նշանակում է ոչ միայն մտածողությունն ուսումնասիրող գիտությունը, այլև տրամաբանական օրենքներին համապատասխան ընթացող բուն իսկ մտածողությունը: Այս իմաստով մենք ասում ենք, այսինչն ուժեղ տրամաբանություն ունի, կամ այնինչը թույլ տրամաբանություն ունի, նրա ասածներում տրամաբանություն չկա և այլն: Այսպիսի իմաստային երկվություն է նկատվում նաև հոգեբանություն, պատմություն, փիլիսոփայություն և այլ տերմինների դեպքում, երբ տերմինը նշա-

նակում է և՛ տվյալ գիտությունը, և՛ նրա ուսումնասիրության օբյեկտը, առարկան: Այս հանգամանքը չպետք է շփոթության տեղիք տա:

Անշուշտ, հարկ է պարզել այն հարցը, թե ինչպիսի դեր ունի տրամաբանություն գիտության ուսումնասիրությունը առհասարակ տրամաբանական մտածելակերպի համար: Քանի որ միշտ էլ կարելի է հանդիպել նման հարցադրումների. մի՞թե անհրաժեշտ է ուսումնասիրել տրամաբանությունը որպես գիտություն տրամաբանորեն դատելու համար, չե՞ որ բազում մարդիկ դատում են տրամաբանորեն, առանց այն ուսումնասիրելու էլ կամ մինչ նրա ուսումնասիրությունն սկսելը: Այդ տեսանկյունից, արդյոք գուր ժամանակի վատնում չե՞ այդ գիտության ուսումնասիրությունը:

Տրամաբանություն գիտության ուսումնասիրելն ու տիրապետելը պարտադիր չէ, որպեսզի մարդը դատի տրամաբանորեն, այնպես, ինչպես մայրենի լեզվի քերականության իմացությունը մայրենի լեզվով խոսելու նախապայմանը չէ: Սա չի նշանակում, թե տրամաբանության ուսումնասիրությունն ունի միայն գիտական, նեղ մասնագիտական նշանակություն: Տրամաբանություն գիտությունը, մտքի, այսպես ասած, քերականությունն է: Այն մտածողության համար ունի նույն դերը, ինչ, որ քերականությունը լեզվի համար: Մայրենի լեզվի քերականությունը չուսումնասիրած մարդու խոսքը, առավել ևս՝ գրավոր, ակնառու կերպով զիջում է այն մարդու խոսքին, ով տիրապետում է քերականության կանոններին: Այսպես, մենք մայրենի լեզուն սկզբնապես սովորում ենք առանց հատուկ կերպով քերականություն սովորելու: Մայրենի լեզվի քերականական կառուցվածքն ու օրենքները մեզ տրվում են լեզվի ընկալման, յուրացման ու գործառության հետ մեկտեղ, և մենք դրանցով գործառում ենք բնականորեն, առանց մեզ հաշիվ տալու դրանց գոյության մասին: Բայց դրանց առկայության, դրանց պարզորոշ իմացության անհրաժեշտության մասին մեզ ստիպում են մտածել հատկապես լեզվական նորմերի ակնհայտ խախտման դեպքերը և յուրաքանչյուր դեպքում պետք է կարողանալ վկայակոչել համապատասխան քերականական կանոնը: Քերականության ուսուցումն օգնում է հիմնավոր կերպով յուրացնելու լեզուն, գործիմացորեն կառուցելու սեփական խոսքը և գնահատելու ուրիշների խոսքը:

Ճիշտ այդպես էլ մարդիկ առանց տրամաբանություն գիտությունը ուսումնասիրելու էլ մտածում են, տրամաբանում են, այսինքն կիրառում են մտածողության տրամաբանական կադապարները և պահպանում են տրամաբանական կանոնները՝ առանց հաշիվ տալու իրենց դրանց գոյության ու գործառության մասին: Բայց դրանց առկայության, դրանց պարզորոշ իմացության անհրաժեշտության մասին մեզ հիշեցնում են հատկապես տրամաբանական կանոնների ակնհայտ խախտման դեպքերը: «Այդպես չի կարելի դատել, դա անտրամաբանական է: Քո ասածներից դա ամեննին էլ չի հետևում», ասում ենք

մենք և աշխատում ենք ցույց տալ, թե որտեղ և ինչպես է խախտվել մտածողության ընթացքը: Կասկած չկա, որ տրամաբանություն իմացողն ավելի հեշտ կխուսափի տրամաբանական սխալներից, կտեսնի և կուղղի ուրիշների սխալները, քան չիմացողը: Տրամաբանության իմացությունը կարևոր է ոչ միայն այս կարգի սխալներ թույլ չտալու և շտկելու համար: Նրա ուսումնասիրությունը բարձրացնում է մարդու տրամաբանական կուլտուրան, օգնում է ավելի հեշտ և հիմնավորապես յուրացնելու ամեն մի գիտելիք, դարձնելով մարդկային միտքն ավելի կուռ, ավելի համակարգված, ավելի կշռադատված, ուստի և՛ առավել համոզիչ:

Բացի այդ, յուրաքանչյուր գիտության համակարգում էլ տրվում են սահմանումներ, կատարվում են բաժանումներ, դասակարգումներ, մտահանգումներ, ապացուցվում կամ հերքվում են զանազան դրույթներ և այլն: Բայց թե առհասարակ ի՞նչ բան է սահմանումը, բաժանումը, մտահանգումը, ապացուցումը, հերքումը, որո՞նք են դրանց կանոնները, այդ գիտելիքները տալիս է միայն տրամաբանությունը: ՌԻբենն գիտությամբ զբաղվող յուրաքանչյուր մարդ և ընդհանրապես մտավոր աշխատանքի հետ այսպես թե այնպես առնչվող ամեն ոք պետք է ունենա այդ տրամաբանական գիտելիքները, որպեսզի կարողանա ճիշտ կատարել ու գնահատել նշված և այլ մտավոր գործողությունները:

ՀԱՐՑ 1. Գիտության առարկա ասելով նկատի է առնվում իրականության այն բնագավառը, որն ուսումնասիրում է տվյալ գիտությունը: Հենց այդ ուրույն առարկայով էլ յուրաքանչյուր գիտություն տարբերվում է մյուս գիտություններից: Եվ ցույց տալ տվյալ գիտության առարկան, նշանակում է պատասխանել այն հարցին, թե ի՞նչ գիտություն է այդ, ի՞նչ է ուսումնասիրում այն: Իսկ ո՞րն է տրամաբանության որպես գիտության առարկան:

Տրամաբանությունն ուսումնասիրում է մարդկային մտածողությունը: Մտածողությունը բարդ և բազմերանգ երևույթ է: Այն ուսումնասիրում են մի շարք գիտություններ՝ ֆիզիոլոգիան, հոգեբանությունը, փիլիսոփայությունը, կիրեռնետիկան, անթրոպոլոգիան և այլն: Ուրեմն ինչո՞վ է տարբերվում տրամաբանությունը որպես մտածողությունն ուսումնասիրող գիտություն, մտածողությունն ուսումնասիրող մյուս, նշված գիտություններից:

Տրամաբանությունն ուսումնասիրում է մտածողությունը, վերանալով նրա անհատական դրսևորումներից, նրա առաջացման, ձևավորման և զարգացման պրոցեսից, դիտարկելով այն որպես տրված, պատրաստի գործառող համակարգ և որպես մարդկային մտածողություն առհասարակ: Մտածողությունն ունի իր յուրահատուկ կառուցվածքային ձևերը, միավորները, կառույցները, որոնց մեջ ձևավորվում, կադապարվում են ամենատարբեր մտքեր: Եվ որ ամենակարևորն է, տրամաբանությունն ուսումնասիրում է մտածողությունը ոչ թե նրա բովանդակության, այլ հենց այդ ձևերի, կառուցվածքի տեսակե-

տից, այսինքն ոչ թե այն տեսակետից, թե մարդն ինչ է մտածում, ինչի մասին է մտածում, այլ այն տեսակետից, թե ինչպես է մտածում, ինչ ձևերով, ինչ կադապարներով, ինչ կառույցներով է մտածում և ինչ օրենքներով է ընթանում մարդու մտածողությունը, ինչի մասին էլ որ նա մտածելիս լինի:

Այսպիսով, ձևական տրամաբանությունն ուսումնասիրում է մտածողության ձևերը, մտածողության կառուցվածքը, մտածողության օրենքներն ու կանոնները, կշռադատության ձևական կանոնավորությունը, կենտրոնանալով դրանց ծավալային, ձևական կողմի վրա:

Մտքի ձևն այն է, ինչն ընդհանուր է մտքերի համար, անկախ դրանց կոնկրետ և մասնավոր բովանդակությունից: Մտքի ձևերը երեքն են՝ հասկացությունը, դատողությունը, մտահանգումը: Այսպես, «ՀՀ մայրաքաղաք», «Հայաստանի ամենամեծ քաղաք», «այն քաղաքը, որտեղ ապրել և ստեղծագործել է Պ.Սևակը» հասկացությունները, թեպետ բովանդակությամբ խիստ տարբերվում են, բայց ձևական տրամաբանության տեսակետից նույնական հասկացություններ են, քանի որ երեքն էլ ծավալի տեսանկյունից, տարածվում են միևնույն առարկայի՝ քաղաք Երևանի, վրա:

Մտքի կառուցվածքը մտքի ձևական տարրերի շաղկապման եղանակն է:

Մտածողության օրենքները չորսն են՝ նույնության, հակասության, երրորդի բացառման և բավարար հիմունքի:

Մտածողության կանոններն այն գործոններն են, որոնց միջոցով շաղկապվում են մտքերը, և որոնք հնարավորություն են տալիս ճշմարիտ նախադրյալներից բխեցնել ճշմարիտ եզրակացություններ:

Մարդկային մտածողության նպատակը ճշմարիտ գիտելիքի ձեռքբերումն է, և բխեցման, մտահանգման հզոր մեխանիզմը անսպառ հնարավորություն է տալիս արդեն ստացված գիտելիքների հիման վրա ստանալու նորանոր ճշմարիտ գիտելիքներ: Բայց միշտ չէ, որ մեզ հաջողվում է հասնել մեր նպատակին: Ուստի, առաջ է գալիս մի շատ կարևոր հարց. ինչի՞ց է կախված գիտելիքի ճշմարտությունը, ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ, որ մեր կողմից ձեռքբերվող գիտելիքները լինեն ճշմարիտ:

Կշռադատության ձևական կանոնավորություն ասելով հասկանում են այն, որ տրամաբանությունն ուսումնասիրում է ոչ թե կոնկրետ նախադրյալների ճշմարտությունը, այլ այն պայմանները, որոնք օգնում են կատարել ճշմարիտ եզրահանգումներ: Իսկ ճշմարիտ եզրահանգումների համար անհրաժեշտ է երկու պայման. 1) կիրառվող դատողությունները լինեն ճշմարիտ, և 2) դրանց միջև կապը լինի կանոնավոր: Կանոնավորությունը մտքերի միջև անհրաժեշտ տրամաբանական կապի պահպանումն է:

ՀԱՐՑ 2. Տրամաբանությունն ունի՝

1. **հանրակրթական նշանակություն.** թեպետ մարդն սկսել է տրամամաբարեն դատել շատ ավելի առաջ, քան ստեղծվել է տրամաբանություն գիտությունը, այնուամենայնիվ, վերջինիս դերը մարդու կյանքում խիստ կարևոր է, քանի որ ցույց է տալիս, թե ինչպես պետք է շաղկապվեն մտքերը ճշմարիտ նախադրյալներից ճշմարիտ եզրակացությունների հանգելու համար: Այն բարձրացնում է մտածողության կուլտուրան, մտածելակերպը դարձնում է ավելի կուռ, ավելի կշռադատված, ավելի համակարգված, ուստիև՝ առավել համոզիչ:
2. **Հատուկ-մասնագիտական նշանակություն.**
 - *լեզվաբանության համար.* անհնար է ճիշտ և լրիվ պատկերացում ունենալ բառի մասին, առանց իմանալու բառի և հասկացության փոխհարաբերությունը: Եվ ընդհանրապես լեզվի, նրա տարրերի, էության բացահայտման նախապայմաններից մեկը լեզվական և տրամաբանական կատեգորիաների (նախադասություն և դատողություն, մտահանգում և նրա լեզվական արտահայտման ձևեր, քերականական և տրամաբանական շեշտ և այլն) փոխհարաբերության հետազոտությունն է:
 - *Մանկավարժության համար.* ամեն մի ուսուցիչ, ամկախ մասնագիտությունից, ուսումնասիրվող կոնկրետ նյութի հիման վրա կարող է և պետք է զարգացնի աշակերտների ձևավորվող տրամաբանական մտածողությունը: Յուրաքանչյուր գիտություն, տեսություն, դասավանդվող առարկա բաղկացած է երկու լեզվից. տվյալ գիտության լեզուն (նրա բուն բովանդակությունը) և տրամաբանության լեզուն (գիտության կառուցման եղանակը, ձևը): Դասավանդման ընթացքում մանկավարժը գործ ունի ոչ միայն տվյալ տեսության լեզվի (այդ տեսության համար բնորոշ հասկացությունների, կատեգորիաների ամբողջության), այլև՝ տրամաբանության լեզվի (այս կամ այն գիտական տեսության դրույթներն ապացուցելու, մեկնաբանելու համար անհրաժեշտ տրամաբանական հասկացությունների, կանոնների, օրենքների) հետ: Գիտության լեզուն (մասնագիտական տերմինները) կազմում են գիտության բուն բովանդակությունը, իսկ տրամաբանության լեզուն (տրամաբանական ապարատը)՝ նրա կառուցման եղանակը, ձևը:
 - *Թարգմանիչների համար.* Թարգմանության ընթացքում խիստ կարևորվում է հասկացության իմացությունը, հասկացության և բառի փոխհարաբերության պարզաբանումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ միևնույն հաս-

կացությունը կարելի է արտահայտել տարբեր բառերով, ինչպես որ միևնույն բառով կարող են արտահայտվել տարբեր հասկացություններ:

Բացի այդ, թարգմանությունը ստեղծագործական գործընթաց է և հաճախ թարգմանության ընթացքում թարգմանիչն այնպես է ոգևորվում, որ դառնում է ինքնուրույն ստեղծագործող: Այս պայմաններում կարևորվում է տրամաբանական ենթատեքստի ըմբռնումը: Ճշգրիտ թարգմանությունը հնարավոր է միայն տրամաբանական համատեքստի, բնագրի ենթատեքստի վերհանման եղանակով: Չի կարելի հասկանալ լեզուն առանց պատկերացում ունենալու այն պայմանների մասին, որոնցում ապրում է այդ լեզվով խոսող ժողովուրդը: Այսպես, Էսկիմոսները ձյան համար մի քանի անվանումներ ունեն: Չյան տեսակների, վիճակների այդ անվանումները արաբերեն թարգմանվում են մի ընդհանուր «ձյուն» բառով: Դա չի նշանակում, թե արաբերենի հնարավորությունները սահմանափակ են: Մյուս կողմից, արաբները, ուղտի տարբեր վիճակները տարբեր անուններով են կոչում, որը Էսկիմոս թարգմանչի առջև ծանր խնդիրներ է առաջադրում:

Մեկ այլ օրինակ ևս. Չինաստանում կառուցում են մի կառույց: Շինարարները թարգմանչի օգնությամբ հարցնում են հրավիրված ռուս մասնագետին, թե կարելի՞ է արդյոք լրացուցիչ ամրակներ դնել: Վերջինս պատասխանում է. «Кашу маслом непортить» (ապուրը յուղով չես փչացնի): Չին թարգմանիչը հաղորդում է շինարարներին. «Քեյ» (կարելի է): Ռուս մասնագետը, որն սկսել էր հասկանալ չինարեն, հետաքրքրվում է, թե ինչու թարգմանիչը ստույգ ձևով չթարգմանեց իր միտքը: Թարգմանիչը բացատրում է, որ Չինաստանում ապուրը յուղով կարելի է փչացնել, քանի որ բրինձն ուտում են առանց յուղի:

Թարգմանչի գործը պակաս կարևոր ու դժվար չէ, քան գրողինը: Թարգմանիչը պետք է բնագրի հեղինակին հավասար տաղանդ և նրա գիտելիքների չափ իմացություն ունենա: Նա պետք է իմանա ոչ միայն գրողի լեզուն գրողին համահավասար, այլև ոչ պակաս խորությամբ այն լեզուն որով թարգմանում է: Բացի այդ, նա պետք է իմանա այն ժողովրդի կենցաղը, սովորույթները, ապրելակերպն ու մտածելակերպը, որի լեզվով նա թարգմանում է բնագիրը:

Բացի այդ, հարկ է հասկանալ, թե ինչպիսի շարժառիթներով, դրդապատճառներով է առաջնորդվել բնագրի հեղինակը այս կամ այն հոմանիշը գործածելիս (գեղարվեստական գրականության մեջ տարածված է միևնույն

հասկացությունը կրկնել տարբեր բառերով. «Ձուր տամ՝ պաղ ջուր, սառը ջուր...» (Հ.Շիրազ), «Միտքս՝ շվար ու մոլոր...»), կամ՝ «Մի՞ թե պիտի թոռմին, թոռնին վարդ ու շուշան խնկաբույր...» (Ավ. Իսահակյան), կամ էլ նույն բառը մեկից ավելի անգամ կիրառելով և հրաժարվելով համապատասխան հոմանիշից:

Միշտ չէ, որ թարգմանչի լեզուն հնարավոր է դարձնում բնագրի ստեղծագործնական գաղտնարանում տեղ գտած հնարների կիրառությունը (օրինակ, հասկացության և բառի փոխհարաբերության ճկունությունները), քանի որ դրանք յուրաքանչյուր կոնկրետ լեզվում յուրովի են արձագանքում գեղարվեստական երկի բովանդակությանը, տրամաբանական կողմին: Լեզուն մեծ հնարավորություններ է ընձեռում թարգմանչին, բայց միշտ չէ, որ կարելի է թարգմանվող լեզվի շրջանակներում գտնել թարգմանվող լեզվի բոլոր լեզվատրամաբանական հարաբերությունների դրսևորումները՝ իրենց բազմազան երանգներով: Արդյունքում ստացվում է, որ թարգմանիչը, հաճախ սահմանափակում է թարգմանության լեզվի հնարավորությունները, որից անպայմանորեն տուժում, աղքատանում է բնագիրը:

Հ.Թումանյանը թարգմանության մասին ասել է. թարգմանությունը ապակու տակ դրված վարդ է, գրեթե անկարելի է, որ թարգմանիչը տա բնագրի հարազատ բույրն ու հրապույրը: Ուրեմն, անհրաժեշտ է, որ ապակու թափանցելիությունը բարձր լինի, ապակին մաքուր լինի: Ինչպես նշում է ակադեմիկոս Բրուսյանը, ապակու դերը կատարում է տրամաբանությունը: Մտքի ձևերի, նրանց շաղկապման օրենքների, մտքի և լեզվի համապատասխան տարրերի փոխհարաբերության իմացությունը կարող է ապահովել թարգմանվող երկի բովանդակության ստույգ վերարտադրումը մեկ այլ լեզվով: Սակայն մեր մտածողությունն այնպես է սերտաճված լեզվի հետ, որ լեզուն իր կնիքն է դնում մտածողության վրա: Իզուր չէ, որ ասում են «լեզվամտածողություն»:

Եթե թարգմանության իմաստային կողմը, մտային բովանդակությունը (վարդին տեսանելի դարձնելը) տրամաբանությունն է ապահովում, ապա վարդի բույրը կախված է լեզվի հարստությունից, լեզվական միջոցների ճկուն կիրառությունից, բառը տեղին օգտագործելուց, մտքին համապատասխան լեզվական երանգներ գտնելուց: Բազմաթիվ են այն դեպքերը, երբ թարգմանության լեզվում բացակայում են բնագրի լեզվի համապատասխան իմաստային երանգները, բնագրի լեզվում գործածված բառի հավելյալ նշա-

նակությունները: Միշտ չէ, որ մի լեզվի ոճական առանձնահատկությունները կարելի է ստույգ ձևով արտահայտել մեկ այլ լեզվի ոճական ուրույն միջոցներով: Երբ վարդը թփից բերվում, դրվում է ապակու տակ, ապա վարդի սիրահարները մտորումների մեջ են ընկնում. ի՞նչ անել, որ ոչ միայն տեսնեն վարդը, այլև զգան նրա բույրը: Միտքը կարող է տարբեր ելքեր որոնել: Ասենք, ոչ թե վարդը կտրել թփից, այլ թփով տեղափոխել: Ոչ թե ապակու տակ դնել, այլ ապակու ետևում պահել: Նոր պայմաններում, նոր հողի մեջ դնել... Ամեն կերպ փորձել պահպանել իր ուրույն բույրը և եթե դա հնարավոր չէ, փորձել նոր բույր տալ: Չէ՞ որ ոչ բոլոր վարդերն են նույն բույրով բուրում: Այսպես են մտածում շատ թարգմանիչներ, և հաճախ թարգմանված գործը նոր կյանքով է ապրում այլ երկրում, վարդը չի կորցնում բույրը, չնայած մի քիչ այլ կերպ է բուրում: Չպետք է վարդին նոր հողում այնպիսի նոր բույր տալ, որը խորթ լինի վարդին և կամ թե փոխել վարդը մեկ այլ ծաղիկով:

- *Իրավաբանության համար.* գործնական և տեսական աշխատանքում իրավաբանն ամեն քայլափոխում գործ է ունենում տրամաբանական խնդիրների վրա խարսխվող առաջադրանքների հետ: Դա հիմք է տվել իրավաբանական տրամաբանություն հասկացության երևան գալուն, որն էլ հենց արտահայտում է տրամաբանության գործնական կիրառությունը իրավաբանական պրակտիկայում:
- *Մաթեմատիկայի համար.* արդեն իսկ սիմվոլիկ տրամաբանության առաջացման ու զարգացման պատմությունը վկայում է մաթեմատիկայում տրամաբանության նշանակության մասին: Պատահական չէ, որ մաթեմատիկական ու տրամաբանությունը հաճախ համեմատում են մի կառույցի հետ, որտեղ մաթեմատիկական հասկացություններն ու կատեգորիաները աղյուսների դեր են կատարում, իսկ տրամաբանությունը^a դրանք միմյանց ամրացնող շինանյութի՝ ցեմենտի շաղախի դեր:

3. Տեսական և կիրառական նշանակություն.

գոյություն ունի տեխնիկական տրամաբանություն տերմինը, որը մատնանշում է սիմվոլային տրամաբանության կիրառումը կիրառելի կիրառություններում, ռելե-կոնտակտային սխեմաներում, մտային պրոցեսների ավտոմատացման գործում, կիրառական մաթեմատիկայում:

Հարց 3. Տրամաբանությունը միատարր չէ: Ամենաընդհանուր մոտեցմամբ, տրամաբանական համակարգերը կարելի է դասակարգել երեք խոշոր խմբերում.

1. ձևական (արհեստոտեյան ավանդական, դասական տրամաբանությունը, մաթեմատիկական կամ սիմվոլիկ տրամաբանության այն համակարգերը, որոնք չեն ենթարկվում լրիվ ձևայնացման, համենայն դեպս տրամաբանություն գիտության դիտարկվող փուլում) տրամաբանություն, որը տրամաբանության այբուբենն է:
2. Բովանդակային (տրանսցենդենտալ, դիալեկտիկական, ինտերոգատիվային (հարց ու պատասխանային), փոխակերպական տրամաբանությունները փաստարկման տեսություն և այլն),
3. ձևայնացված (ֆորմալիզացված, մաթեմատիկական կամ սիմվոլիկ տրամաբանության այն բաժինները, որոնք վերացարկում են ուսումնասիրվող խնդրի ամեն մի բովանդակությունից և դիտվում են որպես ձևայնացված հաշիվներ) տրամաբանություն:

Եթե որպես չափանիշ հիմք է ընդունվում տրամաբանության լեզուն, ապա դասակարգման հետևանքով ստացվում է բնական լեզվի տրամաբանություն և արհեստական լեզվի տրամաբանություն: Առաջինի հիման վրա կառուցված են բովանդակային և ձևական տրամաբանությունները, իսկ երկրորդի հենքի վրա՝ ձևայնացված տրամաբանական համակարգերը:

ՀԱՐՑ 4. Լեզվի և մտածողության փոխհարաբերության հարցը գիտության բարդ խնդիրներից է: Շատ լեզվաբաններ և փիլիսոփաներ զարգացնում են լեզվի և մտքի, խոսքի և մտածողության անջատման տեսակետը, ուրիշները ունեն հակառակ մոտեցում, այսինքն նույնացնում են խոսքը և միտքը, որը մեկ այլ ծայրահեղություն է: Ակադեմիկոս Գ.Բրուսյանի համոզմամբ, լեզուն և մտածողությունը, որպես օբյեկտիվ իրականության արտացոլման ձևեր, իրենց ծագմամբ, գոյությամբ ու զարգացմամբ անբաժանելի կապի մեջ են միմյանց հետ: Ավելին, լեզուն և մտածողությունը միասնական են, քանի որ լեզվի միջոցով և նրա օգնությամբ ոչ միայն առաջանում ու ձևավորվում են մտքերը, այլև լեզվի շնորհիվ դրանք ամրագրվում ու պահպանում են իրենց գոյությունը մարդու գիտակցության մեջ: Առանց լեզվական թաղանթի ոչ մի միտք չի կարող գոյություն ունենալ: Միտքն առաջանում է լեզվական թաղանթի մեջ, լեզվական թաղանթով պարուրված:

Այն հանգամանքը, որ մտքերի և համապատասխան լեզվական արտահայտությունների առաջացումը միասնական, միաժամանակյա գործընթաց է, չի նշանակում, թե լեզուն և միտքը նույնական են: Նախ, լեզուն ունի համազգային բնույթ, քանի որ որպես հաղորդակցման միջոց, ընդհանուր է տվյալ ազգի բոլոր խավերի, սոցիալական բոլոր խմբերի, հասարակության բոլոր անդամների համար: Մինչդեռ մտածողությունն իր բնույ-

թով համամարդկային է, ընդհանուր է բոլոր մարդկանց համար, անկախ նրանց սոցիալական վիճակից, ազգային պատկանելությունից և այլն:

ա) *Լեզուն որպես հաղորդակցման միջոց*: Լեզուն օգնում է մարդկանց հաղորդելու մտքեր ոչ միայն տվյալ սերնդի շրջանակներում, այլև տվյալ սերնդի հոգեկան ողջ մշակույթը հաղորդում է հետագա սերունդներին: Լեզվի շնորհիվ է, որ մարդիկ պատկերացում ունեն անցյալի, անգամ հեռավոր անցյալի պատմության մասին: Լեզվի միջոցով և նրա օգնությամբ են առաջանում և ձևավորվում մտքերը բառերի ու բառակապակցությունների ձևով, որոնք մարդու գիտակցության մեջ պահպանվում են դարձյալ լեզվի շնորհիվ:

Տրամաբանական մտածողությունը ևս իրականանում է լեզվի հենքի վրա: Լեզվի միջոցով են արտահայտվում նաև մարդու հոգեկան աշխարհը, զգայական իմացության արդյունքները: Սրանցում է լեզվի իմացաբանական նշանակությունը:

Միևնույն իրողությունը կարող է տարբեր լեզվական արտահայտություններ ունենալ (օրինակ, սիրահարված գույգից մեկը նկատի ունենալով առաջիկա բաժանումն ասում է. «միայն տասը օր», իսկ մյուսը՝ «դեռևս ամբողջ տասը օր»: Կամ՝ ենթադրենք մի պրոֆեսորի հրապարակային դասախոսությանը 100 աթոռ ունեցող սրահում ներկա են 50 ունկնդիր: Ներկա լրագրողներից մեկն այդ դասախոսության մասին իր հոդվածում կարող է գրել. «Պրոֆեսորի դասախոսությանը սրահը կիսով չափ լեցուն էր», իսկ մյուսը՝ «Պրոֆեսորի դասախոսությանը սրահը կիսով չափ դատարկ էր»: Երկու լրագրողներն էլ ճիշտ են արձանագրում իրողությունը, սակայն ակնհայտ է, թե որքան տարբեր են դրանք: Կամ մի թե նույնն են «կիսաճշմարիտն» ու «կիսաստուտը»: Այսինքն, լեզվական այս կամ այն եղանակը, միջոցը, ձևը, խոսքը ընտրելիս մենք տրամաբանական միևնույն ինֆորմացիային տալիս ենք զգացական երանգավորում, էմոցիոնալ շղարշ: Լեզուն, խոսքը զգայական գունավորում տալով մտքին, այն հասցնում է ունկնդրի գիտակցությանը ոչ թե անմիջականորեն, այլ նրա սրտի միջով, ինչն էլ նպաստում է այն բանին, որ այն համոզման ուժ է ստանում և կարող է դրդել գործողության, դառնալ գործելակերպի շարժառիթ (Պուշկին. «Խոսքով այրիի սրտերը մարդկանց»):

բ) *Լեզուն որպես նշանային համակարգ*. կարևոր է տարբերել բնական լեզվի նշանները արհեստական լեզվի նշաններից: Բնական լեզուն, որպես նշանների համակարգ, բնապատմական պրոցեսի արդյունք է, իսկ արհեստական լեզուների նշանների համակցությունը՝ մարդկանց միջև պայմանավորվածության արդյունք:

Նշանների (արհեստական) լեզուն առաջանում է բնական լեզվի հենքի վրա, այն հասկանալի կարող է դառնալ և մեկնաբանվել միայն բնական լեզվի միջոցով: Դժվար է գտնել գիտելիքների որևէ բնագավառ, որտեղ չօգտագործվեն փոփոխականներ, նշաններ:

Նշանների լեզուն նպատակ ունի ծառայել այս կամ այն գիտական նպատակին և կարևոր դեր ունի գիտության մեջ: Գիտության համար էական է գործածվող տերմինների, բառերի միանշանակությունը, իսկ խոսակցական, կենդանի լեզվում բառերը որպես կանոն, բազմանշանակ են: Նշանների օգնությամբ հնարավոր է դառնում կրճատ ձևով արտահայտել գիտական նշանակություն ունեցող այս կամ այն միտքը, սկզբունքը: Միանշանակությունը հնարավոր է դարձնում նշանների լեզվի հանդես գալը որպես գիտության միջազգային լեզու:

Նշանների լեզվի այս և մի շարք այլ առանձնահատկություններ որոշ հետազոտողների հանգեցրել են իմացության պրոցեսում նրա դերի գերազնահատմանը: Սեմետիկայի՝ նշանների մասին գիտության հիմնադիր Չ.Պիրսը այն համարել է մտածողության էությունը: Որոշ փիլիսոփաներ անգամ առաջարկել են դրանցով փոխարինել կենդանի լեզուները: Սակայն կենդանի, խոսակցական լեզուն մտքի հաղորդակցման միջոց է, իսկ նրա հենքի վրա առաջացած արհեստական, նշանների լեզուն ունի միայն օժանդակ իմացական նշանակություն և ծառայում է կոնկրետ գիտական նպատակների: Օրինակ, բազմանշանակությունը բացառվում է նշանների լեզվում, իսկ կենդանի լեզվում՝ ապահովում է լեզվի ճկունությունը:

Գերմանացի նշանավոր մաթեմատիկոս և տրամաբան Գ.Ֆրեգեն խոսակցական լեզվի և նշանների լեզվի միջև նույն փոխհարաբերությունն է տեսնում, ինչ գոյություն ունի աչքի ու մանրադիտակի միջև: Նշանների լեզուն օժանդակ է և օգնում է կենդանի խոսակցական լեզվին իրականացնելու իր խնդիրները իմացության պրոցեսում:

ՀԱՐՑ 5. Տրամաբանությունը պատմական գիտություն է: Դարեր շարունակ^a սկսած Ք.ա. VII- Ք.ա. I դդ, տրամաբանությունը հաստատուն տեղ է գրավել կրթության համակարգում: Թեպետ Հին Հնդկաստանն ու Հին Չինաստանը շատ ավելի հին քաղաքակրթություններ են (Ք.ա. I-VIII դդ.) և տրամաբանության արմատները առկա են արդեն նրանց մշակութային, սակայն, որպես համակարգված գիտություն, այն կարող էր և առաջացավ միայն Հին Հունաստանում, որովհետև այստեղ, մասնավորապես, Աթենքի քաղաքացիությունում, ստրկատիրական դեմոկրատիայի պայմաններում լայն թափ ստացած ժողովրդական հավաքները (Էկլեկսիաները), ուր քննվում էին բոլոր քիչ թե շատ խոշոր հարցերը՝ «բոլորի» մասնակցությամբ, խթանում էին հոետորության, վիճաբանության արվեստի զարգացումը և հնարավոր էին դարձնում, ավելին՝ հրամայաբար պահանջում էին մի կողմից, խոսքի, լեզվի, մյուս կողմից մտքի և համապատասխանաբար դրանք ուսումնասիրող գիտությունների՝ քերականության և տրամաբանության հետազոտությունների զարգացման անհրաժեշտությունը:

Տրամաբանության հարցերով զբաղվել են հին հնդկական փիլիսոփայական դպրոցների (Ք.ա. VII-I դդ.)՝ չարվակի դպրոցի (քննել են զգայական և տրամաբանական իմացության փոխհարաբերությունը, թերագնահատել են մտահանգումը, իմացության պրոցեսում առավելությունը տալով ընկալման դերին), ջայնիզմի (առաջադրել են 7 տիպի դատողություններ, քննադատել են Չարվակի դպրոցը իմացության պրոցեսում տրամաբանության դերը թերագնահատելու համար), նյայա համակարգի (նյայա նշանակում է տրամաբանություն, տրամաբանական եզրակացություն, մեթոդ: Փորձել են բացահայտել մտահանգման էությունը, հետազոտել սիլոգիզմի կառուցվածքը, (սիլոգիզմը բաղկացած է 5 դատողություններից), դասակարգել ապացուցումը, ապացուցման ընթացքում հանդիպող տրամաբանական սխալները, զարգացրել են ուսմունք նախադասության տրամաբանական կառուցվածքի մասին), սանկիյա համակարգի (կրում է նյայայի ազդեցությունը), վայշեշիկի, միմանսի, բուդդայականության ներկայացուցիչներն ու հետևորդները: Ք.ա. VII դարում փիլիսոփա Դհարմակիրտին ստեղծել է տրամաբանության դասագիրք:

Հնդկական տրամաբանության վերաբերյալ առաջին աղբյուրները Ք.ա. I հազարամյակի նյութեր են: Հին հնդկական ցեղային հասարակության քրմերի շրջանում հետաքրքրություն է առաջանում դեպի լեզուն, ինչը պայմանավորված էր նրանով, որ խոսքին վերագրվում էր մոգական ուժ: Անվան շուրջ գոյություն ուներ մի մոգական տեսանկյուն, ըստ որի, անվանումը համարժեք է անվանվող առարկային կամ անձին և դա արտացոլված է արարիչների՝ անվանումները սահմանողների, մասին դիցաբանական նյութերում:

Լեզվական տարբեր երևույթների իրազեկման հաջորդ աստիճանը կապված էր բրահմանների (քրմական գրքեր) ծիսական և դիցաբանական մեկնաբանության հետ: Դիտարկվում էր, որ տիեզերքը բաղկացած է տարածության և ժամանակի մեջ գոյություն ունեցող բազմաթիվ երևույթներից, այդ երևույթները անվանող բառերից: Այսպիսով, առաջ էր քաշվում բոլոր առարկաների ու երևույթների համապարփակ հասկացությունների և դրանք արտահայտող բառերի մասին գաղափարը, ըստ որի բառերը գոյություն ունեն առարկաների ու երևույթների բառ-բնություն, որպես պոտենցիա: Ուստի, մասնավորը ընկալելու համար այն պետք է դուրս բերել բառ-բնության շրջանակներից, երբ դա տեղի է ունենում առարկաների ու երևույթների համապարփակ հասկացությունների և դրանց իմմանենտ բառերի միջև առաջանում են արտահայտողի և արտահայտվողի հարաբերություններ:

Քուրմ-բրահմանները, ովքեր մեկնաբանում էին Հին Հնդկաստանի փիլիսոփայական ստեղծագործությունները՝ «Վեդաները», անդրադարձել են այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝ լեզվի և մտածողության կապը, ճանաչողության հնարավորությունները և սահմանները և այլն: Բուն տրամաբանության խնդիրները սերտորեն կապված էին փիլի-

ստփայական ուսմունքների բովանդակության հետ: Ք.ա. IV դարում, որպես աշխարհի զուտ կրոնական մեկնաբանության ընդդիմախոս գաղափարախոսություն, առաջանում է ջայնիզմի (էթիկական ուսմունք) և բուդդայականության ոչ ուղղադավան կրոնափիլիսոփայական ուսմունքը: Ք.ա. VI-II դարերում առաջանում են յոթ ուղղադավան հնդկական փիլիսոփայական դպրոցներ՝ չարվակների դպրոցը, վայշեշիկի դպրոցը, սանկիյա դպրոցը, յոգայի դպրոցը, միմանսայի դպրոցը, վեդանտայի դպրոցը և նյայայի համակարգը: Մեծ թվով փիլիսոփայական համակարգերի ստեղծման և դրանց կողմնակիցների միջև առաջացած բանավեճերի շնորհիվ սկսում են զարգանալ տրամաբանությունը և իմացության տեսությունը: Փիլիսոփայական վեճերի փորձի ընդհանրացման գործընթացում ձևավորվում են տրամաբանության տեսության տարրերը:

Վաղ-բուդդայական տրամաբանությունը (Ք.ա. VI–Ք.հ. II դդ.) զարգանում էր հռետորության շրջանակներում՝ որպես ճարտասանական արվեստի տեսություն և պրակտիկա: Հռետորության օրենքների ուսումնասիրությունը զուգակցվում էր խոսքի տրամաբանական տեսանկյունների հետազոտությամբ: Բուդդայական տրամաբանության վաղ շրջանին բնորոշ էր բազմանդամ (ավելի քան հինգ անդամներից կազմված) սիլոգիզմի ընդունումը՝ որպես փաստարկման պրոցեսի հիմնական եղանակ:

Երկրորդ շրջանը (Ք.հ. III–V դդ.) կապված է նյայա և վայշեշիկա տրամաբանական դրպրոցների առաջացման և գործունեության հետ, որոնք մշակում էին մտահանգումների տեսությունը: Հենց նյայայի դպրոցը սկսեց դիտարկել տրամաբանությունը որպես առանձին գիտություն, իհարկե, ոչ որպես համակարգ, այլ՝ կարճ աֆորիզմների ձևով: Նյայայի դպրոցում զարգացման հատկապես սկզբնական շրջանում, կարևոր դեր էր խաղում կասկածի կատեգորիան: Դա արտացոլվել է դպրոցի սկզբնական իմացաբանական սկզբունքում, ըստ որի, երկու հակասող դատողություններից (օրինակ, «հոգին գոյություն ունի և «հոգին գոյություն չունի») մեկն անպայման ճշմարիտ է, մյուսը՝ սխալ:

Նյայա և վայշեշիկա դպրոցների ներկայացուցիչները առանձնացնում էին մտահանգումների երեք տեսակ, որոնցում.

1. մտքի ընթացքն ուղղված է նախորդից դեպի հաջորդը, պատճառից՝ դեպի հետևանքը (օրինակ, կրակից՝ ծխին, ամպերի կուտակումից՝ անձրևին),
2. հաջորդից՝ դեպի նախորդը, հետևանքից՝ դեպի պատճառը,
3. մտահանգումներ նմանության սկզբունքով, որոնք հնարավոր են այն դեպքերում, երբ յուրաքանչյուր հաջորդող դեպք նման է նախորդող դեպքին, որի հիման վրա արվում է հետևություն այդ դեպքերի առաջացման միևնույն պայմանների մասին:

Ըստ նյայայի տրամաբանության, ցանկացած մտահանգում եզրակացություն է նմանության սկզբունքով:

Նյայայի դպրոցը ստեղծել է սիլոգիզմի սեփական տեսությունը, ըստ որի սիլոգիզմը բաղկացած է հինգ բաղադրիչներից՝ թեզիս, հիմնավորում, օրինակ, կիրառում, եզրակացություն:

Նյայայի դպրոցի սիլոգիստական տեսության հիմնական տարբերությունը Արիստոտելի սիլոգիստիկայից այն է, որ հնդկական սիլոգիստիկայի հիմքը ներթափանցման տեսությունն է, մինչդեռ արիստոտելյան սիլոգիստիկայի իմացաբանական հիմքը մասնավորի համապատասխանեցումն է ընդհանուրին:

Հնդկական տրամաբանության հիմնարար հասկացությունը՝ վյապտին, պետք է բացատրեր բարդ առարկաների բնույթը: Վյապտիի միջոցով բացատրվում էր «ինֆորմացիայի ներառումը մեկ այլ ինֆորմացիայի մեջ», օրինակ, «կրակը ներթափանցում է ծխի մեջ», «ջուրը լցնում է սափորը» և այլն: Միմյանց մեջ են ներթափանցում ոչ թե առարկաները այլ դրանց որոշ հատկանիշներ:

Հնդկական տրամաբանության մեջ խիստ կերպով տարանջատվում են առարկան, որի մասին մտածում են (խոսում են) և մտքերը առարկայի մասին (ինչ խոսում են):

Վասուբանդիտուն (420-500 թթ.) նյայայի դպրոցի տրամաբանական ուսմունքի հիման վրա ստեղծել է եռանդամ սիլոգիզմի մասին ուսմունքը, ըստ որի ընդունվում էր մեծ, փոքր և միջին տերմինների միջև ներքին անքակտելի կապ: Եզրակացության սուբյեկտին հատուկ միջին տերմինը բավարար է թեզիսի ապացուցման համար:

Եռանդամ սիլոգիզմ ընդունում էին նաև միմանսա և վեդանտա դպրոցները: Դիգնագան (Ք.հ. V-VI դդ.), ում կոչում են, հնդիկ Արիստոտել, իր կարևորագույն «Իմացության աղբյուրների մասին» աշխատության մեջ դիտարկում է մտածողության հասկացության ընդհանուր բնույթը: Ըստ Դիգնագայի, հասկացությունը մտածողության արդյունքն է: Հասկացությունների կապը կազմում է մտահանգում: Դիգնագայի տրամաբանության մեջ ուսումնասիրվում են եռանդամ (հիմնավորում, օրինակ, թեզիս) և հնգանդամ (թեզիս, հիմնավորում, օրինակ, կիրառություն և եզրակացություն) սիլոգիզմները:

Ըստ Դիգնագայի, եզրակացությունը մտահանգման մեջ կլինի ճիշտ, եթե պահպանվեն միջին տերմինի, որը նա անվանել է տրամաբանական հիմնավորում, օրենքները: Դիգնագան հետազոտել է տրամաբանական հիմնավորման (միջին տերմինի) անհրաժեշտության և բավարարության խնդիրը: Որպեսզի տրամաբանական հիմնավորումը դառնա անհրաժեշտ և բավարար պայման, այն պետք է համապատասխանի երեք պահանջների.

1. տրամաբանայան հիմնավորումը և տրամաբանական հետևանքը պետք է վերաբերեն միևնույն առարկայական տիրույթին,

2. տրամաբանայան հիմնավորումը պետք է կապված լինի այն ամենի հետ, ինչի հետ կապված է տրամաբանական հետևանքը, այսինքն՝ մտահանգման օբյեկտի հետ,
3. տրամաբանայան հիմնավորումը պետք է լինի անհամատեղելի այն ամենի հետ, ինչի հետ անհամատեղելի է տրամաբանական հետևանքը:

Տրամաբանական հիմնավորման վերոնշյալ երեք հատկանիշները մտահանգման ճշմարտացիության պայմանն են:

Դեհարմակիրտիի (Ք.հ. VII դ.) տրամաբանական ուսմունքը բուդդայական տրամաբանության զարգացման գագաթնակետն է: Նրա դիտարկած տրամաբանական խնդիրները արտացոլվել են նրա հետևյալ աշխատություններում՝ «Իմացության ճշմարտության մասին», «Տրամաբանության մի կաթիլ», «Տրամաբանության համառոտ դասագիրք՝ Դեհարմոտտարի մեկնաբանություններով», «Տրամաբանական կապի ուսումնասիրություն», «Հրահանգներ գիտական բանավեճերի մասին, «Պատկերացումների համադրության ժամանակ առաջացած տարբերությունների բացատրություն», «Տրամաբանական հիմնավորման համառոտ դասագիրք»: Դեհարմակիրտիի տրամաբանական համակարգը կարելի է բաժանել ընկալման և մտահանգման տեսության վերաբերյալ ուսմունքի, որը ներառում է ապացուցման, տրամաբանական սխալների և բացասման մասին պատկերացումները:

Դեհարմակիրտին զարգացնում է Դիգնագիի ուսմունքը՝ տրամաբանական հիմնավորման մասին:

Դեհարմակիրտին սահմանափակել է սիլոգիզմի անդամների քանակը՝ առաջարկելով երկանդամ սիլոգիզմ, որտեղ բացակայում է եզրակացությունը, որը սակայն ենթադրվում է: Ըստ նրա ուսմունքի, յուրաքանչյուր ասույթ մտահանգում է, որը պետք է ունենա ապացուցման երկու նախադրյալ: Այդ պատճառով Դեհարմակիրտիի երկանդամ սիլոգիզմը կազմված է յոթ անդամներից (վեց նախադրյալներ և մեկ եզրակացություն: Նա առանձնացրել է մտանանգումների երեք ձև.

1. նմանության (հետևանքի) սիլոգիզմներ,
2. տարբերության (բացասման) սիլոգիզմներ,
3. համընկնման-նույնության սիլոգիզմներ:

Նրա կարծիքով մտահանգումը, ինչպես և ընկալումը, իմացության հավաստի միջոցներ են:

Դեհարմակիրտին ուսումնասիրել է տրամաբանական սխալերը, որոնք տրամաբանական հիմնավորման սխալ կամ կասկածելի լինելու հետևանք են:

Չնայած այն փաստին, որ բուդդայական տրամաբանությունը ստեղծվել է ի հակադրություն նյայաի և վայշեշիկի դպրոցների ռելիստների, չի առանձնանում յուրահատկությամբ: Նյայայի դպրոցն արդեն ուներ կուռ մշակված տրամաբանական ուսմունք, երբ բուդդայականները սկսեցին հետաքրքրվել տրամաբանության խնդիրներով: Սակայն, նրանց հետաքրքրությունը տրամաբանության հանդեպ ոչ թե ֆորմալ էր, այլ՝ փիլիսոփայական, իսկ ավելի կոնկրետ՝ էպիստեմոլոգիական: Այդ հետաքրքրությունը պատճառ դարձավ բուդդայական տրամաբանության մեջ ռեֆորմի ներմուծման համար, ինչն սկսել էր Դիգնագան, և ավարտին հասցրեց Դհարմակիրտին: Ռեֆորմի արդյունքը դարձավ միակ ավարտուն տրամաբանական համակարգի՝ նավյանյաի տրամաբանության ստեղծումը, որը ձևավորվեց եվրոպական մշակույթի սահմաններից դուրս:

Ըստ ժամանակակից տերմինաբանության, հին հնդիկների տրամաբանական մտածողությունը ինտենսիվնալ է, այսինքն գործ ունի միայն իմաստների և ապացուցող մտածողության ընթացքում ձևավորվող իմաստաբանական հարաբերությունների ուսումնասիրության հետ:

Հին չինական փիլիսոփայական դպրոցներից ուշարավ է Մո-Ցզիի դպրոցը (Ք.ա. V-IV դդ.), որի ներկայացուցիչներն ուսումնասիրել են մտահան-ումը, նկարարել մտահանգման յոթ եղանակ:

Հին Չինաստանում տրամաբանության սկզբնաղբյուրը կապում են Չունցյու և Չժանգո ժամանակաշրջանների հետ (Ք.ա. 722-221 թթ.): Հենց այս ժամանակաշրջանում՝ «պատերազմող պետությունների» դարաշրջանում ստեղծվում է մի իրավիճակ, որը հայտնի է որպես «հարյուր դպրոցների մրցակցություն», որի ներկայացուցիչների միջև սկսվում են փիլիսոփայական քննարկումներ:

Փոքրիշատե ամբողջական տրամաբանական հայեցակարգ է ստեղծվել անվանումների և վիճելի կշռադատությունների (մինցզյա) դպրոցի, լեզիստների (ֆացզյա) դպրոցի, կոնֆուցիական (ժուցզյա) դպրոցի և հատկապես մոիստների (մոցզյա) դպրոցի ջանքերով:

Առաջին չինացի տրամաբանն է Խո Շին: Խո Շին (մոտ Ք.ա. 350-260 թթ.) նախացինյան դարաշրջանի գիտնական է: Նա, ինչպես և անվանումների դպրոցի մյուս ներկայացուցիչները, հենվում էր իրականության լեզվական արտահայտման խնդրի լուծման վրա: Խո Շին անվան խնդիրը մեկնաբանում էր որպես առարկայի բնույթի արտացոլման գործընթաց, որը տեղի է ունենում այլ առարկաների հետ դրա համեմատության ժամանակ, և նշում էր առարկայի բնույթի զգայաբար ընկալելի արտաքին հատկանիշների անհամապատասխանությունը:

Խո Շին հայտնի է որպես մի շարք ապորիաների հեղինակ, որոնք նման են հին հույն փիլիսոփա Զենոն Էլեացու պարադոքսներին: Իր փաստարկները շարժման, ժամա-

նակի և տարածության անըմբռնելի հակասությունների մասին Խո Շին զարգացնում էր Ջենոնից անկախ: Չին այս տրամաբանին վերագրում են տասը պարադոքսալ դատողություն, որոնցից առավել հետաքրքիրը հետևյալն է՝ «ամենամեծը չունի արտաքին սահման, իսկ ամենափոքրը գուրկ է ներքին սահմանից: «Ամենամեծը» և «ամենափոքրը (մինիմումը)» հասկացություններ են, որոնք Խո Շին մեկնաբանում է՝ նկատի ունենալով բացարձակ մաքսիմումի և բացարձակ մինիմումի տարածական տեղայնացման անհնարինությունը:

Խո Շիի ժամանակակիցն էր Գունսուն Լուն (մոտ Ք.ա. 325-250 թթ.), ով հետագոտել է տրամաբանական կապի բնույթը դատողության մեջ: Վերլուծության մեթոդաբանական հիմքն էր հին հունական պլատոնիզմին նմանվող մի հայեցակարգ: Դա հնարավորություն տվեց Գունսուն Լունին «Սպիտակ ձին ձի է» դատողությունը համարել սխալ, քանի որ «է»-ն նույնացնում է երկու հատկանիշները («սպիտակություն» և «ձիություն»՝ դատողության սուբյեկտում) նույն խմբի հատկանիշներից մեկի («ձիության»՝ դատողության պրեդիկատում) հետ: Ըստ նրա, այդպիսի մոտեցման դեպքում համանմանորեն կարելի է հանգել հանրաբաշխական սխալ հավասարման՝ $a+b=b$ («սպիտակություն» + «ձիություն» = «ձիություն»): «Սպիտակություն» հասկացությունը գոյություն ունի միանգամայն անկախ, ինչպես որ «ձի» հասկացությունը մինչև սպիտակ գույնի հետ զուգակցվելը, այստեղից նա եզրակացնում է՝ «Սպիտակ ձին ձի չէ»:

Գունսուն Լուն ստեղծեց հատկանիշ-ցուցիչների («չժի») մասին ուսմունքը, որոնց ներքո հասկանում էր գույն, ձև և առարկաների այլ հատկանիշներ, որոնք արտահայտվում են մարդու ստեղծած մտածածին և արտաբերվող նշանների ձևով: Նա ընդունում է հատկանիշ-ցուցիչների միջև սահմանների ուրվագծման- դժվարությունը:

Վերլուծելով նոր գիտելիքի ստացման գործընթացը՝ Գունսուն Լուն առաջնային էր համարում օրինակի («յուան») հիման վրա կատարված եզրակացությունը, ինչը «մի առարկայի բացատրության համար մեկ այլ առարկայի օգտագործման մեջ է»:

Գունսուն Լուն առաջադրել է մի շարք պարադոքսներ:

Հին Չինաստանում տրամաբանությունը կրում էր տարբեր քաղաքական ուսմունքների և էթիկական հայեցակարգերի ազդեցությունը: Կոնֆուցիականների և մոխսոների դպրոցներում ուսումնասիրվող տրամաբանական-իմացաբանական խնդիրների հիմքում հայտնվեց «անվանումների շտկման» կոնֆուցիական պահանջը, որն առնչվում է «ճշգրիտ, կանոնավոր» (правый), «ճշմարիտ, ճիշտ» (правильный), «ճշմարտություն» (правда) հասկացությունների հետ: Այս պահանջի տեսական իմաստը և գործնական կիրառությունը արտահայտված են Կոնֆուցիոսի հետևյալ դրույթում. «Ղեկավարը պետք է լինի ղեկավար, բարձրաստիճան այրը՝ բարձրաստիճան այր, հայրը՝ հայր, որդին՝ որդի»:

Կոնֆուցիական այս ծրագրի իմաստը իրականության և անվան (բառի) հարաբերության համապատասխանությունն է ավանդույթներին: Որոշակի հասարակական դիրք զբաղեցնող մարդը պետք է դրսևորի իր պաշտոնին համապատասխան վարք: «Անվանումների շտկման» տեսությունը ընդունվել է նաև լեզվաստների դպրոցի կողմից:

Ք.ա. III - II դդ. Գունսուն Լուի տրամաբանական հայացքների ջատագովը դարձան Մո Յզիի (Ք.ա. մոտ 490-403) ստեղծած մոխստական դպրոցի ներկայացուցիչները: Ուշ շրջանի մոխստները ընդհանրացրեցին իրենց նախորդների նվաճումները և ստեղծեցին «Գունսուն Լունցզի» տրակտատը, ինչպես նաև չինական տրամաբանության պատմության մեջ առաջին հանրագիտարանային երկասիրությունը՝ «Մոբյան» («Մո Յզիի կշռադատությունները»): Տրամաբանական խնդիրները այդ աշխատություններում բացահայտվում էին հետևյալ ուղղություններով.

1. «մին» (անունների) տեսություն,
2. «ցի» (ասույթների) տեսություն,
3. «շո» (կշռադատություններ) և «բյան» (վեճի) տեսություն,
4. մտածողության հիմնական օրենքների շարադրում:

Ըստ վերացարկման աստիճանի՝ մոխստները անունները բաժանում էին հետևյալ խմբերի՝ ընդհանուր (օրինակ՝ «առարկատ»), սեռային (օրինակ՝ «ձի») և մասնավոր (օրինակ՝ «աղաղակ»): Այս դասակարգման քերականական մեկնաբանությունը ներկայացնում է բաժանում համապատասխանաբար համապարփակ, ունիվերսալ, ընդհանուր հասարակ և մասնավոր հասարակ անունների: Հատուկ անունների դասը առանձնացվում էր հատուկ կերպով: Առարկաներին անուններ տալու գործընթացը մոխստները դիտարկում էին որպես ճանաչողական գործընթացի կարևոր բաղադրիչներից մեկը: Ըստ նրանց, այդ գործընթացը ենթադրում է երեք չափում.

1. անվան կապը անվան հետ,
2. անվան կապը իր կրողի (деготат) հետ,
3. անվան կապը իր գործածողի հետ՝ որպես խոսակցին տեղեկույթ տրամադրելու միջոց:

Մոխստները անիմաստ էին համարում անհամեմատելի հասկացությունների գործածությունը:

Վաղ Ցին շրջանից հետո տրամաբանական հայեցակարգերն այլևս չէին դիտարկվում: Չինական տրամաբանության նախաբուդդիստական շրջանը փոխվում է նախ Ք.հ. VI դարում բուդդիստական տրամաբանության (հնդիկ Պարամարտիսան), ապա՝ Ք.հ. VII դարում (չինացի ուխտավոր Սյուան Յզյան):

Հարկ է նշել, որ Հին Չինաստանում փաստարկման և մտքերի արտահայտման միջոցները խիստ տարբերվում էին եվրոպականից: Չինական փիլիսոփայությունը չուներ զարգացած գոյաբանություն և տրամաբանություն, գիտության մեջ գերակշռում էր ինտուիցիան: Տրամաբանական գիտելիքները, որոնք առաջացել էին չինական փիլիսոփայական ավանդույթներում չունեն ապացուցման տեսության, տրամաբանական բխեցման, եզրահանգման բնույթ:

Հին Հունաստան. Տրամաբանություն իտության հիմնադիրը Արիստոտելն է: Սակայն տրամաբանության ստեղծումը նախապատրաստվել էր հին հունական փիլիսոփայության մեջ դեռևս մինչև Արիստոտելի հանդես գալը: Այսպես,

Հերակլիտ (մ.թ.ա. VI դ.) – քննել է զայական և տրամաբանական իմացությունների փոխհարաբերության հարցը: Իմացության նպատակը, լոռսը, բնութ-յան թաքնված կապերն ու զարացման օրինաչափությունները ճանաչելն է:

Պարմենիդես և Զենոն Էլեացի (Ք.ա. I դ.) – քննել են տրամաբանության որոշ օրենքներ. Պարմենիդեսը տվել է նույնության, իսկ Զենոնը՝ նաև հակասության օրենքի մետաֆիզիկական մեկնաբանությունը:

Սոփեստներ (իմաստակներ կամ կեղծ իմաստուններ) Պրուտագորասը, Գորգիասը, Պրոդիկոսը (Ք.ա. V դ.) զարացրել են տրամաբանական սխալների տեսությունը: Վաղ շրջանի սոփեստները (վարձու ուսուցիչներ) դրական դեր են ունեցել առհասարակ գիտության և, մասնավորապես, փիլիսոփայության զարգացման գործում: Մինչդեռ ուշ շրջանի սոփեստները այնքան են հրապուրվում իրենց հաջողություններով, որ սկսում են չարաշահել բառի բազմիմաստությունը, լեզվի ճկունությունը, իրենց մտքի ուժն ու կարողությունները և հասնում էին այնտեղ, որ փորձում էին համոզել ամեն մեկին և ամեն ինչում: Նրանք նույնիսկ մշակել էին հարցերի մի ամբողջ շարք, որոնցով կարելի էր մեղադրել ցանկացած մեկին, ցանկացած բանում (օրինակ, «Դու դադարել ես ծեծել քո հորը», հաշվի էր առնվել այն հանգամանքը, որ դատավարության ընթացքում մեղադրվողը «այո»-ից կամ «ոչ»-ից բացի ուրիշ պատասխան տալու իրավունք չուներ և հետևաբար, բոլոր դեպքերում էլ մեղավոր պիտի ճանաչվեր):

Դեմոկրիտը (Ք.ա. V դ.) հին հունական տրամաբանության պատմության մեջ առաջինն էր, որ մտածողության կանոնների մասին իր ուսմունքն անվանեց տրամաբանություն: Քննել է անալոգիայի (համանմանության), հիպոթեզի հարցե-րը: Առաջինն է մեկնաբանել բավարար հիմունքի օրենքը:

Սոկրատեսը (Ք.ա. V դ.) իր բանավոր զրույցների ընթացքում զարացրել է երկխոսության, բանավեճի տեսությունը:

Պլատոնը (Ք.ա. IV դ.) ուշադրություն է դարձրել դեդուկցիայի և ապացուցման տեսության վրա:

Արիստոտելը (Ք.ա. IV դ.) հանրագիտարանային միտք է ունեցել և չկա գիտության քիչ թե շատ նշանակալի բնագավառ, որի մասին նա հետազոտություններ չունենա: Արիստոտելի դերը տրամաբանության պատմության մեջ ամենից առաջ այն է, որ նա առաջինը ստեղծեց ուսմունք տրամաբանական մտածողության ձևերի և օրենքների մասին, դրանով իսկ հիմք դնելով տրամաբանություն գիտությանը և, որ տրամաբանության մեջ մտցրեց փոփոխականի գաղափարը (S-ը և P-ն փոփոխականներ են, որոնք կարելի է վերածել սիմվոլների): «Արիստոտելի ժամանակներից սկսած, երկու հազար տարվա ընթացքում, տրամաբանությունը ոչ մի առաջընթաց քայլ չի կատարել և վերջնականապես ավարտուն գիտություն է» (Կանտ):

Արիստոտելի տրամաբանական բնույթի երկերն ամփոփված են «Օրգանոն» (մեթոդ) ժողովածուում: Այդ աշխատություններն են.

- «Կատեգորիաներ» (ստորոգություններ), որտեղ Արիստոտելը շարադրել է իր ուսմունքը հասկացության մասին:
- «Մեկնության մասին», որտեղ նա շարադրել է իր ուսմունքը դատողության մասին, ինչպես նաև՝ հակասության և երրորդի բացառման օրենքները:
- «Առաջին անալիտիկա» (առաջին վերլուծություն), որտեղ շարադրված է նրա ուսմունքը մտահանման, մասնավորապես, սիլոգիզմի, մասին:
- «Երկրորդ անալիտիկա» (երկրորդ վերլուծություն), որտեղ շարադրված է նրա ուսմունքը ապացուցման (ապոդեկտիկայի) և հերքման մասին:
- «Տոպիկա», որտեղ շարադրված է ուսմունքը տրամաբանական կանոնների մասին (ապոդեկտիկա, դիալեկտիկա, էրիստիկա կամ սոփեստիկա):
- «Սոփեստական հերքումների մասին», որը համարվում է «Տոպիկայի» 9-րդ գլուխը և որտեղ նա զարացրել է մտահանման ընթացքում հնարավոր տրամաբանական սխալների տեսությունը, մերկացնելով սոփեստների (ուշ շրջանի), միտումնավոր տրամաբանական սխալները, լեզվի ճկունության հաշվին ինքնահաստատվելու նրանց էժան ձգտումը, ինչի արդյունքում տրամաբանությունը հանգում էր ինքնանպատակ մտավարժության:

Արիստոտելն ունեցել է իր շարունակողները հին հունական փիլիսոփայության մեջ: Այսպես, Հելլենիզմի դարաշրջանում (Ք.ա. IV - II դդ.)՝ Թեոփրաստը և Եվդեմոսը լրացրին Արիստոտելի ուսմունքը սիլոգիզմի մասին, իսկ Էպիկուրը տրամաբանությունը կամ կանոնիկան դիտում է որպես ուսմունք իմացության ուղիների մասին: Ստոիցիզմը Փիլիսոփայությունը (կենդանի օրգանիզմ) բաժանում է երեք մասի, բարոյագիտության

(մստտ մասեր), ֆիզիկայի (հոգին) և տրամաբանության (ուկրերը և ջղերը): Արիստոտելն անտարբեր է գտնվել իր ստեղծած գիտության անվան նկատմամբ: Այն առաջին անգամ տրամաբանությունն են անվանել ստոիկները: Մեգարական ստոիկյան դպրոցը զարգացրել է ուսմունքը դատողությունների մասին, ստեղծել մաթեմատիկական տրամաբանության կարևոր բաժիններից մեկի՝ ասույթների հաշվի, առաջին սաղմերը: Եթե Արիստոտելը փոփոխականներով նշանակում էր դատողության բաղկացուցիչ տարրերը, ապա ստոիկները փոփոխականներով նշանակում էին դատողությունները, որպես տրամաբանական ամբողջական միավոր, դրանով իսկ՝ առաջադրելով մտքի ձևերի ձևայնացման խնդիրը: «Եթե Արիստոտելի տրամաբանությունը ձևական է, ապա ստոիկներինը՝ և՛ ձևական, և՛ ձևայնացված» (Տրամաբանության պատմության մասնագետ Յան Լուկասևիչ): Մեգարացի Եվբուլիդիի առաջադրած, այսպես կոչված, ստախոսի մասին կշռադատությունը սկիզբ դրեց պարադոքսների վերաբերյալ աշխատությունների ստեղծմանը, դրանց լուծման եղանակների մշակմանը:

Միջնադարյան տրամաբանությունը վերածվում է մտքի բովանդակագուրկ ձևերի, զուտ ձևական կանոնների հավաքածուի, որը դասավանդվում է «Դիալեկտիկա» անվամբ: Մխոլաստիկան տրամաբանական վերլուծությունը դիտում է ոչ թե որպես ճշմարտության հասնելու միջոց, այլ որպես ինքնանպատակ, բովանդակագուրկ մտավարժություն:

Նոր ժամանակներում տրամաբանության բնագավառում Ֆրենսիս Բեկոնին (XVI դ.) է վերագրվում մտածողության ինդուկտիվ մեթոդի (ընդհանուր դրույթի բխեցումը մասնավոր փաստերի ուսումնասիրությունից) հիմնադրումը, չնայած այն որպես մտահանգման ձև, ուսումնասիրվել է դեռևս Հին աշխարհում: Բեկոնը ինդուկցիան հայտարարում է որպես գիտության հետազոտության հիմնական մեթոդ: Նրա գլխավոր գործը կոչվում է Նոր Օրգանոն, ի հակադրություն Արիստոտելի Օրգանոնի, մասնավորապես, սիլոգիզմի մասին Արիստոտելի ուսմունքի: Ինդուկտիվ մեթոդի բնորոշ գիծը Բեկոնը համարում է վերլուծությունը: Նա հակադրում էր դեդուկցիան և ինդուկցիան, ինչը պայմանավորված էր տվյալ ժամանակաշրջանի բնագիտության զարգացման պահանջներով:

Թոմաս Հոբս (XVI-XVII դդ.) - Փիլիսոփայության սկզբունքները աշխատության I մասը նվիրված է տրամաբանությանը, որը նա դիտում է որպես բանական մտածողության մեթոդ: Մտածողությունը հանեցնում է պարզ մաթեմատիկական գործողությունների. թվերի նման կարելի է ումարել և հանել հասկացությունները, դատողությունները, մտահանումները, փաստերը, օրենքները և այլն: Ուստի, տրամաբանությունը, ըստ նրա, պետք է զբաղվի հասկացությունների, դատողությունների, սիլոգիզմների հետ կատարվող թվաբանական ործողությունների ուսումնասիրությամբ:

Ռենե Դեկարտ (XVI-XVII դդ.) - Կանոններ բանականության ղեկավարման համար, Մետաֆիզիկական խոհեր, Փիլիսոփայության սկզբունքները աշխատություններում զարգացրել է մաթեմատիկական մտածողության սկզբունքները: Նրա հետևորդներ Անտուան Առնոն և Պիեռ Նիկոլը Դեկարտի ազդեցությամբ բել են *Տրամաբանությունը որպես մտածողության արվեստ ձեռնարկը*:

Լայբնից (XVII-XVIII դդ.) – մաթեմատիկական տրամաբանության հիմնա-դիրն է: Հիմնել է բավարար հիմունքի օրենքը: Նա տրամաբանությունը դիտում է որպես տառերի միջոցով իրականացող որոշակի հաշիվ: Տրամաբանությունը «հաշվման արվեստ է», «մտքերի այբուբեն», որով պետք է լուծել ցանկացած խնդիր, ցանկացած հաշիվ:

Կանտ (XVII- XVIIIդդ.) - Կանտը առաջինն էր, որ տարբերակված մոտեցում ցուցաբերեց մտքի ձևերի հասկությունների նկատմամբ: Նա տրամաբանությունը բաժանում է ձևական և տրանսցենդենտալ տրամաբանությունների: Առաջինը վե-րացարկում է իմացության ամեն մի բովանդակությունից, իմացության և վերջինիս օբյեկտի միջև ամեն մի հարաբերությունից և քննում է մտքի ձևերը, ընդհանրապես, որպես այդպիսիք, ուստի մտածողության ձևերն ու օրենքները դառնում են բովանդակագուրկ, փորձից անկախ, ապրիորի ձևեր: Մինչդեռ տրանսցենդենտալ տրամաբանությունը հաշվի է առնում ճանաչվող օբյեկտի բնույթը, մտքի ձևերի մեջ ամփոփված իտելիքի ծառումն ու նշանակությունը, դրանց բովանդակությունը: Տրամսցենդենտալ տրամաբանությունը համադրում է իմացության ձևն ու բովանդակությունը: Այն Իմացաբանական տրամաբանությունն է:

Հեյլ (XVIII-XIX դդ.) – Փոքր տրամաբանությունը, Տրամաբանության գիտությունը աշխատություններում համակարված ձևով շարադրել է տրամաբանության կատեգորիաները, մտածողության ձևերը: Ստեղծել է դիալեկտիկական տրամաբանությունը, որը հակադրել է ձևական տրամաբանությանը: Տրամաբանության իտությունը աշխատությունում նա ցույց է տալիս բացարձակ իդեայի զարգացման առաջին փուլը, իդեայի զարգացումը «մաքուր մտքի» ոլորտում: Այս կապակցությամբ նա քննում է հասկացությունը, դատողությունը, մտահանգումը: Հեյլի մոտ տրամաբանությունը ոչ միայն իտություն է մտածողության ձևերի և օրենքների մասին, այլ նաև, մեթոդ:

Հայ փիլիսոփայության պատմության մեջ տրամաբանություն գիտության զարգացումը կապվում է հետևյալ անունների հետ.

Եզնիկ Կողբացի (մ.թ. V դ.) - Եղծ աղանդոց կամ Գիրք ընդդիմութեանց երկում տրամաբանական անհակասականությունը դիտվում է որպես կանոնավոր մտածողության սկզբունքներից ամենակարևորը: Բացի այդ, այլոց աղանդների հերքման ընթացքում, Կողբացին ործնականում զարացնում է ապացուցման և հերքման յուրօրինակ և հետաքրքիր եղանակներ:

Դավիթ Անհաղթ (մ.թ. V դ.) – մեզ են հասել նրանից չորս աշատասիրութ-յուններ, որոնցից երեքը նվիրված են տրամաբանության խնդրակարգին, իսկ չորրորդը, զուտ փիլիսոփայական է: Այսպես, 1. Սահմանք իմաստասիրութեան, 2. Մեկնութիւն ի «Ստորոգութեանցն Արիստոտելի», 3. Մեկնութիւն ի «Վերլուծա-կանն» Արիստոտելի: Արիստոտելից Դավթի կատարած թարմանություններին ու մեկնությունները հետազոտության առարկա են դարձել հին հունական փիլիսոփայության անլիացի մասնաէտ Կոնիբիբի համար:

Վահրամ Բաբունի (XIIIդ.) – հանդես է եկել Արիստոտելի Օրանոնի մեկ-նաբանություններով:

Հովհան Որոտնեցի (XIV դ.) – մեկնել է Արիստոտելի ործերը:

Գրիգոր Տաթևացի (XIV-XV դդ.) - «Գիրք հարցմանց», «Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր» «Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր», «Սողոմոնի առակների մեկնությունը» «Ոսկեփորիկ» և այլ երկասիրություններում զարգացրել է ինտերոատիվային (հարց ու պատասխանային) տրամաբանության հարցերը: Ուշագրավ է, որ վերջինիս հիմնադրումը վերաբերում է XX դ. Ֆինն-ամերիկյան փիլիսոփա Յու.Հինտիկային, ըստ որի փաստարկումը պետք է ընդունի խիստ երկխոսության (հատկապես, հարց ու պատասխանի) ձև: Ակնհայտ է, որ Գրիգոր Տաթևացին XIV-XVդդ. ոչ միայն ործնականում է զարգացրել հարց ու պատասխանային փաստարկումը, այլև սովորաձավալ աշխատություն է նվիրել դրա, որպես այդպիսին, մեկնությանը, մշակմանն ու կատարելաործմանը, դրանով իսկ ապահովելով այդ խնդրի իրաործումը նաև մետամակարդակում: Նկատի է առնվում, մասնավորապես, նրա «Գիրք հարցմանց» երկը: Իսկ նրա վերը նշված մյուս աշխատասիրություններում հարցադրումները, հարց ու պատասխանային երկխոսությունը որպես կանոն դրսևորվում են ուղղակիորեն, այսինքն դրանցում փաստարկումը բացահայտորեն իրականացվում է որպես երկխոսություն (այդ թվում և որպես հարց ու պատասխան), իսկ երբեմն էլ նաև, անուղղակիորեն, որպես մենախոսություն-շարադրություն, որը ևս բովանդակում է երկխոսության տիպական հատկությունները, սակայն ոչ բացահայտ, քիչ թե շատ թաքնված ձևով:

Ակադեմիկոս Գ.Ա.Բրուտյան –

Ակադեմիկոս Համլետ Գևորյան -

Հարց 6. Շրջապատող իրականության ճանաչումը մարդու կողմից սկսվում է օբյեկտ-սուբյեկտ հարաբերությունից: Սուբյեկտը ճանաչող մարդն է, իսկ օբյեկտը, իմացության առարկան. այն, ինչը դառնում է մեր դատողությունների, քննարկումների նյութը:

Մարդն ունի ճանաչողության երկու տեսակ, զայական և տրամաբանական: Զգայական իմացությունն իրականանում է զգայարանների օնությամբ և դրանց միջոցով

(զգայարանները հինն են, ինտուիցիան զգայարան չէ): Նրա ձևերն են, զգայություն, ընկալում, մտապատկեր: Ջայությունը իմացության ամենապարզ, տարրական ձևն է: Այն արտաքին նյութական աշխարհի առարկաների այս կամ այն հատկության արտացոլումն է մարդու իտակցության մեջ, նրա որևէ զգայարանի միջոցով: Ջայությունը աղափար է տալիս առարկայի այս կամ այն հատկության մասին, մինչդեռ իրականության մեջ գոյություն չունեն առանձին-առանձին, իրարից անկախ հատկություններ, այլ միայն բազմաթիվ հատկություններով օժտված իրեր: Մարդն իր զայարանների միջոցով արտացոլում է ոչ միայն առարկաների առանձին կողմերը, այլև առարկաներն իրենց հատկությունների միասնությամբ: Այս ձևով մարդու գիտակցության մեջ առաջանում են ընկալումներ: Ընկալումը առարկայի ամբողջական արտացոլումն է մարդու գիտակցության մեջ նրա զգայարանների համատեղ գործունեությամբ, դրանց վրա առարկայի անմիջական ներգործության պահին: Ջայության համեմատությամբ ընկալումը զգայական իմացության առավել բարդ ձև է, առարկայի հատկությունների ամբողջության և ոչ թե միայն մեկ կողմի, մասին: Ջգայական իմացության երրորդ ձևը մտապատկերն է, որը երբևէ զգայված, երբևէ ընկալված առարկայի հատկության, կերպարի վերարտադրությունն է մարդու գիտակցության մեջ առարկայի բացակայության պայմաններում: Մտապատկեր կազմելիս մեր գիտակցության մեջ վերարտադրվում են առարկայի այն հատկությունները, որոնք առավել ուժեղ տպավորություն են թողել մեզ վրա այդ առարկան ընկալելիս: Մտապատկերը զգայական իմացության բարձրագույն ձևն է, և զգայականից տրամաբանական իմացությանն անցնելու կամուրջը, քանի որ այն ներառում է վերացարկման և ընդհանրացման տարրական ձևերը:

Մարդն օժտված է վերացական մտածողությամբ: Իմացության ընթացքում կատարվում է թռիչք զգայական իմացությունից դեպի տրամաբանական իմացություն: Ջգայարանների միջոցով ստացված գիտելիքները խիստ սահմանափակ են, քանի որ հնարավոր չէ դրանց միջոցով իմանալ այն երևույթները, որոնք տեղի են ունեցել անցյալում կամ պետք է տեղի ունենան ապագայում, կամ այն երևույթների մասին, որոնք տեղի են ունենում այժմ, բայց այնտեղ, ուր մենք ներկա չենք: Ավելին, կան բազմաթիվ երևույթներ, որոնք ենթակա չեն զգայական իմացության: Օրինակ, սոցիալական, մարդկային հարաբերությունները, բնական երևույթներից լույսի արագությունը, ատոմի ներսում կատարվող երևույթները և այլն:

Ջգայական իմացության սահմանափակությունները լրացվում են տրամաբանական մտածողությամբ, որն իրականանում է մտքի ձևերի՝ հասկացության, դատողության և մտահանման միջոցով: Սրանցից ամեն մեկը մի առանձին և խոշոր թեմա է ընդգրկում և կքննարկվի դասընթացի հետագա ընթացքում:

Զգայական և տրամաբանական իմացությունների միջև առկա են ինչպես որակական, այնպես էլ, քանակական տարբերություններ: Եթե առաջինում տարբերակված չեն էականն ու ոչ էականը, եզակին ու ընդհանուրը, պատահականն ու օրինաչափը, ապա վերացական մտածողությունը տարբերում է դրանք, բացահայտում առարկայի էությունը, ներքին կառուցվածքը, թաքնված հարաբերությունները, զարգացման օրինաչափությունները, երևույթների հիմքում ընկած պատճառական, անհրաժեշտ կապերը: Օրինակ, գիտական կանխատեսումը, որը տեղի է ունենում տրամաբանական մտածողության շնորհիվ, կարող է ավելի ստույգ գիտելիքներ տալ ապագայի երևույթների մասին, քան՝ նույնիսկ ապագայում այդ երևույթների անմիջական ընկալումը:

Փիլիսոփայության պատմության մեջ եղել են երկու ուղղություններ սենսուալիզմ և ռացիոնալիզմ, որոնցից յուրաքանչյուրի ներկայացուցիչները համապատասխանաբար բացարձակացրել են իմացության այս կամ այն աստիճանի դերը, մյուսի հաշվին:

Իրականում, չնայած իրենց տարբերություններին, իմացության երկու աստիճանները հանդես են այլս միասնաբար, փոխապայմանավորելով միմյանց: Մարդու զգայարանների միջոցով ստացված տվյալները ենթարկվում են բանա-կան վերլուծության: Մարդու մոտ, այսպես կոչված, զուտ զայություններ չկան. մարդկային զայությունները իմաստավորված զայություններ են:

Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(հիմնական և լրացուցիչ)

1. Գ.Ա.Բրուտյան, Տրամաբանության դասընթաց, Երևան, 1987, էջ 5- 52:
2. Գ.Ա.Բրուտյան, Տրամաբանություն, Երևան, 1998, էջ 6-13:
3. Գ.Ա.Բրուտյան, Իմաստասիրական երկխոսություններ, Գիրք 2, Հայաստան հրատ., Երևան, 1981, էջ 3-92:
4. Հ.Ա.Գևորգյան, Վ.Խ.Բաղդասարյան, Տրամաբանություն, ուսումնական ձեռնարկ միջն. դպրոցի 9-10-րդ դասարանների համար, Երևան, 1994, էջ 3-10: А.Д.Гетманова. Логика. 9-ое изд. М., 2006.
5. Проблемы логики научного познания. Под ред. П.В.Таванца, Москва, 1994.